


Ա. ԿՈՍԱՆԵՎ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ



ՊԵՏՏՐԱՏ

ՀՀԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱԹԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՑԵՐԵՎԱՆ 1938

17 MAR 2010

37(47)

4-75

ԱԿ.

Ա. ԿՈՍԱՐԵՎ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ



ՊԵՏՅՐԱՏ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ
ՁԵՐԵՎԱՆ

ՄԱՆԿԱԳՐԱՏԱՆԵԿԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
1988

23 MAY 2013

44782

Թարգմ. Ս. Ոհանյան
Պատ. խմբագիր՝ Հր. Կոթողյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Քասապարյան
Սրբագրիչ՝ Թ. Հովակիմյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Հ. Մանուկյան



16374638
38

Գլավիտի լիազոր Կ. 4648. Հրատ. № 4989.
Պատվեր 1312. Տիրաժ 4000.
Թուղթ 72×105. Տպագրական. 0,6 մամ.
Մեկ մամուլում 40960 նիշ. Հեղինակային 0,6 մամ.
Հանձնված է արտադրության 10 դեկտեմբերի—1937 թ.
Ստորագրված է տպագրելու 2 հունվարի—1938 թ.
Քինը — 40 կ.

Պետհրատի տպարան, Յերեան, Լենինի փողոց. № 65

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԲԸ

ԽՍՀ Միության Սահմանադրության 121-րդ հոդվածն ասում է.

«ԽՍՀՄ-ի քաղաքացիներն ունեն կրթության իրավունք:

—Սյդ իրավունքն ապահովվում է ընդհանուր — սարտադիր տարրական կրթությամբ, ձրի կրթություն՝ ներառյալ բարձրագույն կրթությունը: Բարձրագույն դպրոցներում սովորողների ճնշող մեծամասնությանը տրվող պետական թոշակների սխտեմով, դպրոցներում մայրենի լեզվով ուսուցանելով, զործարաններում, խորհանոցային սովորողներում, մեքենատրակտորային կայաններում ու կոլտնտեսություններում աշխատավորների համար ձրի արտադրական, տեխնիկական ու ագրոնոմիական ուսուցումը կազմակերպելով»:

Սյդ նշանակում է, Վոր մեր լերկրի յուրաքանչյուր լերեխայի, յուրաքանչյուր լերիտասարդի համար պետությունն ապահովում է կրթությունն ստանալու բոլոր հնարավորությունը:

Ցարական Ռուսաստանում լերիտասարդու-

թյունը չէր կարող նույնիսկ յերազել աշգրիսի իրավունքների մասին: Յարական Ռուսաստանը կլասիկ անգրագիտության յերկիր եր: Կապիտալիստներին ու կալվածատերերին ձեռնառու չէր, վորպեսզի բանվորները և գյուղացիները տիրապետելին գիտություններին. գրագետին շահագործելն ավելի գժվար է:

Վլադիմիր Իլիչ Լենինը ցարական Ռուսաստանի մասին ասում էր, վոր դա մի յերկիր է, վորտեղ ժողովրդական մասսան «կեղեքված էր կրթության և գիտելիքների իմաստով»: 1913 թ. Վ. Ի. Լենինը գրել է «Ռուսները և նեգրերը» հոգվածը, վորտեղ բերել է այսպիսի տվյալներ:

«...Ռուսաստանում անգրագետների թիվը կազմում է $73\frac{0}{10}$, չհաշվելով մինչև 9 տարեկան յերեխաները: Հյուս. Ամեր. Միացյալ Նահանգների նեգրերի սեջ անգրագետների թիվը (1910 թ.) կազմում է $44\frac{0}{10}$ »: Այս թվերը բերելով, Լենինը գրել է, վոր — «Ռուսների մեջ ճորտության հետքերը շատ ավելի յեն մնացել, քան նեգրերի մեջ»:

1913 թվին ցարական կառավարութունը, գեմատվոնները և քաղաքային ինքնավարությունները ժողովրդական կրթության վրա ծախսել են 182 միլիոն ռուբլի, վորից յուրա-

քանչյուր բնակչին ընկնում 1 ռ. 36 կ.: Ժողովրդական կրթության սխտեմը խիստ դասակարգային բնույթ էր կրում: Նույնիսկ միջնակարգ դպրոցի ղռները փակ ելին բանվորների և չքավոր գյուղացիության յերեխաների համար. բնակչության այդ խավերից այնտեղ կարող ելին ընկնել միայն բացառությունները:

Աստիճանավորների բարձր դասն իր յերեխաների համար ուներ լիցեյներ, ազնվականությունը, բուրժուազիան, ինտելիգենցիան՝ գիմնազիաններ, ռեալական դպրոցներ, զինվորականների յերեխաների համար՝ գոյություն ունեւին կադետական կորպուսներ, հոգեվորականների յերեխաների համար՝ հոգեվոր դպրոցներ և սեմինարիաներ, իսկ աղջիկների համար՝ թեմական դպրոցներ, վաճառականներն ու գործարանատերերն իրենց յերեխաների համար ստեղծում ելին առեւտրական դպրոցներ: Աղջիկների համար կալին ինստիտուտներ և գիմնազիաններ, պետական, հասարակական, մասնավոր և այլն:

Աշխատավորության յերեխաների կրթությունը փաստորեն սահմանափակված էր ստորին դպրոցներով: Չունեւոր դասակարգի յերեխաների դպրոցների հիմնական տիպը՝ յեռամյա

տարրական և լեկեղեցական — ծխական դպրոց — ներն ելին:

1914/15 թվին դպրոցներում սովորում եր 7,8 միլիոն լերեխա: Այս թիվը բնավ չի արտահայտում ժողովրդական կրթության իսկական պատկերը Ռուսաստանում, վորովհետև բոլոր սովորողների 93,5 տոկոսն ընկնում եր ստորին դասարաններին, իսկ միջին դասարաններում (5-րդ, 6-րդ, 7-րդ) սովորում եր միայն 378 հազար հոգի, կամ $4,9\%$: Բանվորների և գյուղացիների լերեխաները միջոցներ չեին ունենում թեկուզ քաղաքային լեկեղեցական — ծխական դպրոցները վերջացնելու համար. կարիքը կտրում եր նրանց դպրոցական նստարաններից, միջոցները չեին բավականացնում դպրոցական պիտույքներ, վոտնամաններ գնելու և ուսման վարձը վճարելու համար: Տարրական դպրոցներից շատերում ուսումը ձրի չեք, հենց այդ պատճառով 1910 թվին առանց ուսումը վերջացնելու Պետերբուրգի տարրական դպրոցներից հեռացան 7 հազար սովորող, վորից 2 և կես հազարը միայն 1-ին դասարաններից:

Ցարական որենքները ժողովրդական զրպրոցների բոլոր խնդիրները հանգեցնում ելին

մի բանի. «Տարրական ժողովրդական դպրոցները նպատակ ունեն հաստատելու ժողովրդի մեջ կրոնական և բարոյական հասկացողութուններ և տարածել ոգտակար տարրական գիտելիքներ»:

Գործնականում այդ իրականանում եր այսպես. տարրական դպրոցների սովորողներին գլխավորապես ավանդում ելին՝

ա) կրոն (համառոտ հավատո հանգանակը և սրբազան պատմությունը):

բ) Բաղաքացիական և հոգեվոր գրքերի ընթերցանություն:

գ) Գրություն:

դ) Թվաբանության չորս գործողութուններ:

ե) Յեկեղեցական լերգեցողություն»:

Շաբաթվա 24 դասից 6 դասը հատկացված եր կրոնին, 3 դասը լեկեղեցական — սլավոնական գրագիտությանը («գրաբառին»):

Այս փաստերի հիման վրա դժվար չե պատկերացնել, թե ինչպիսի պիտելիքներ եր տալիս տարրական դպրոցն իր աշակերտներին՝ բանվորների և գյուղացիների լերեխաներին:

Յեկեղեցական-ծխական դպրոցը կարելի չե տալ, վորնուխիսկ կրթություն չեր տալիս լերեխա-

ներին. նա բավական անկեղծ ասում էր, վոր իր նպատակն է «աշակերտներին ներշնչել աստծու ահը, սեր դեպի սուրբ յեկեղեցին, հավատարմութիւն դեպի նրա ավանդները, նույնպէս և ճշմարիտ հպատակութիւն և սեր դեպի հայրենիքը»:

Ավետարան, առավոտյան, յերեկոյան և այլ աղոթքներ սովորեցնելու վրա ավելի մեծ ուշադրութիւն եր դարձվում, քան թվաբանութեան վրա:

Իգուր չեր, վոր տերտերը թե յեկեղեցական — ծխական և թե տարրական դպրոցում գլխավոր անձն եր, վորն ի դեպ ասած, թե սովորեցնում եր աղոթք և թե ծեծում եր:

Քաղաքային և յեկեղեցական — ծխական դպրոցների աշակերտները պարտավոր ելին հաճախելու յեկեղեցի և անտրտունջ, ուսուցիչների և տերտերի հսկողութեամբ կատարելու իրենց քրիստոնեական պարտքը՝ խոստովանութիւն և սուրբ հաղորդութիւն:

Ռուս գեղարվեստական գրականութեան մեջ շատ լավ են արտահայտված հին դպրոցի այդ մտաւր և տխուր պատկերները:

Ուսանողների տրամադրութիւնը շատ վառ է արտահայտել Պամյուլովսկին իր «Բորսայի նկարագրութիւն» գրքի մեջ հետևյալ տողերով.

«Վորքան յերջանիկ են այն ժողովուրդները, վորոնց ամրակուռ ելութիւնը չի զգացել մեր տանջանքները և չի ճաշակել մեր գիտութիւնները»:

Իհարկէ ժողովրդական ուսուցիչներ ի մեջ չառեւրը կային, վորոնք աջնվորեն ելին վերաբերվում դեպի իրենց գործը և իրենց նվիրում ելին ժողովրդի լուսավորութեան և կրթութեան գործին: Բայց ցարական ռեժիմում հենց «ժողովրդական ուսուցիչ» բառերը հնչում ելին հեղնորեն և նվաստութեան ու աղքատութեան խորհրդանշաններն ելին հանդիսանում:

Ժողովրդական ուսուցչին վճարում ելին խրդճուկ կոպեկներ, նրանք քաղցում և սառչում ելին համարյա անբնակելի խրճիթներում: Նրանց հետապնդում եր յուրաքանչյուր ուրյագնիկ, յուրաքանչյուր սև հարչուրակային:

Բանվորների և գյուղացիների յերեխաների կրթութեան գործն ավելի վատ դրութեան մեջ եր ազգային ծայրամասերում, վորոնք հեծում ելին ցարական Ռուսաստանի ծանր լծի տակ: Այդ ծայրամասերի և գաղութների այսպէս կոչված ազգային փոքրամասնութիւնները զուրկ ելին իրենց գրականութիւնից, զրկված ելին մայրենի լեզվով սովորելու հնարավորութիւններից: Միայն կալվածատերերի, կուլակների, բեկերի

ու հոգեվորական ծագում ունեցողներին յերե-
խաների սահմանափակ չնչին խմբակին թույլ եր
տրվում սովորելու, իսկ բազմաթիվ ազգային
ծայրամասերի ազդարնակչության մնացած մաս-
սան մատնված եր անգրագիտության և անկու-
տուրականության:

Վլադիմիր Իլյիչ Լենինը ժողովրդական լուսա-
վորության միևիստրությունն անվանում եր
«Ժողովրդական մթադնության միևիստրու-
թյուն»: Բնութագրելով կրթության ազգատիկ
գրությունը Ռուսաստանում, Լենինը միաժամա-
նակ մատնանշում եր՝ «Դեռ անչափ ավելի տխուր ե,
կամ ավելի ճիշտ ավելի զգվելի չե սովորողների
և ուսուցիչների հոգեվոր ընկճվածության, ստո-
րացման, իրավագրկման և ճնշվածության պատ-
կերը Ռուսաստանում: Ժողովրդական լուսավորու-
թյան միևիստրության ամբողջ գործունեյու-
թյունն այդ ուղղությամբ մի համատարած անար-
զանք եր հանդեպ քաղաքացիների իրավունքները,
հանդեպ ժողովուրդը:

Վոստրիկանական հետախուզությունը, վոստրիկա-
նական կամայականությունները, վոստրիկանու-
թյան խոչընդոտներն ընդհանրապես ժողովրդի
և մասնավորապես բանվորների կրթության
դեմ, վոստրիկանական ավերումներն այն բոլորի,

վոր կատարում ե ժողովուրդն իր լուսավորու-
թյան համար, — ահա թե ինչին ե հանգում
միևիստրության ամբողջ գործունեյությունը»:

Լավ չեր գրությունը Ռուսաստանում նաև
բարձրագույն կրթության նկատմամբ, բարձրա-
գույն դպրոց ընդունվող յերիտասարդից պա-
հանջում ելին ծագման, քաղաքական բարեհու-
սության, վոստրիկանությունից վերցրած «անա-
ղարս վարքի» մասին վկայականներ: Յեվ իհար-
կե հասարակ ժողովրդից շատ քչերին եր հաջո-
վում անցնել այդ ֆիլտրը և տեղ գրավել համալը-
սարանական խարանում:

Պաշտոնական տվյալներով 1914/15 թվին
Ռուսաստանի բարձրագույն դպրոցներում սովո-
րում ելին 124 հազար ուսանող: Համալսարան-
ներում ուսանողների 36% -ը կազմում ելին ազ-
նրվականների և չինովնիկների յերեխաներ,
10,3% -ը՝ հոգեվորականների, 11% -ը՝ պատ-
վավոր քաղաքացիների և վաճառականների,
14,5% -ը՝ ունեվոր գյուղացիների, 24,3% -ը՝
մեղչանների և համքարների, 2,8% -ը՝ ալ դասա-
կարգերի յերեխաներ, մնացածներն ոտարահը-
պատակներ ելին:

Մեկնարանելով այս — առանց այդ ել բնու-
թաղրող թվերը, պետք ե ասել, վոր գյուղացի-

ական դասին ելին պատկանում՝ որինակ՝ առեվտորականները, կուլակները, իսկ մեշչանական դասին — առեվտորականները, ֆաբրիկանտները, չինովնիկները:

Ուսանողների գերակշռող մեծամասնութիւնը պատկանում էր շահագործող դասակարգերին՝ ազնվականութեանը, հոգեվորականութեանը, կուլակներին և «պատվավոր քաղաքացիներին»:

Սակայն բանվորների և գյուղացիների զավակների ընդունելութեան դժվարութիւնները չեն սպառնում միայն սոցիալական խիստ ընտրութեամբ: Բարձրագույն դպրոցի ուսման վարձի չափազանց բարձր լինելը փակում էր աշխատավորների առաջ կրթութիւնն ուսման վարձի պարհը: Հարկավոր էր տարեկան վճարել 100 ռուբլուց վոչ պակաս ուսման վարձ: Իսկ հագուստը՝, դասագրքերը՝, դասական պիտուէքները՝, բնակարանը՝, սնունդը՝: Դրա համար ևս զրամ էր պահանջվում, իսկ աղաքիսին, ինչպես հայտնի է, բանվորն ու գյուղացին չունեին:

Բարձրագույն դպրոցներում սովորողների մեջ քիչ չեյին այսպես կոչված «հավիտենական ուսանողները», վորոնք ուսման սահմանված ժամկետից 2—3 տարի ավելի ելին սովորում: Այդ «հավիտենական ուսանողները» գլխավորապէս ունեվոր խավերից ելին:

Ինչպես տեսնում ենք «կրթութեան իրավունքը» նախահեղափոխական Ռուսաստանում պատկանում էր միայն բուրժուական տղաներին ու աղջիկներին: Յեվ բանվորների ու գյուղացիների առանձին «բախտավոր» զավակները միայն ոգտվում ելին զրանից, վորպէս վորոքութիւն:

Համ չի գրութիւնն այժմ նաև բուրժուական յերկրներում: Ֆաշիզմը Գերմանիայում շատ բանով գերազանցել է ցարական Ռուսաստանին: Տարեց — տարի պակասում է Գերմանիայի բարձրագույն դպրոցներում սովորողների թիվը: Յեթե 1930 թ. աչնտեղ սովորում էր 137 հազար մարդ, ապա 1934 թ. թվին իջավ 89 հազարի, իսկ 1936 թ. թվին՝ 76 հազարի:

Գերմանիայի ժողովրդական լուսավորութեան մինիստրութեան 1936 թ. փետրվարի 26 — ի ղեկրետով բարձրագույն դպրոցների ընդունելութիւնը՝ 1935 թ. համեմատութեամբ կրճատված էր 30—40 տոկոսով: Այդ ղեկրետի համաձայն բարձրագույն դպրոցները կարող են ընդունվել միայն.

ա) Նաջիոնալ — սոցիալիստական կուսակցութեան հին «մարտիկները», վորոնց կուստոմաի համարը մեկ միլիոնից չի անցնում:

բ) Աշակերտական նաջիոնալ — սոցիալիստական

միության և Գերմանիայի ուսանողների նացի-
ոնալ—սոցիալիստական միության անդամները,
վորոնք ընդունվել են միության մեջ 1931 թվից
վոչ ուշ:

գ) Գրոհայինների, պահնորդական զորամա-
սերի, մոտորացված մարտական միջոցների նացի-
ոնալ—սոցիալիստական ղեկավարների կորպուսի՝
նացիոնալ—սոցիալիստական միությունների մեջ
մտնող ուսանողները:

Արժի արգելք հիշատակել այստեղ այն մասին,
վոր այսպես կոչված «վոչ լիարժեք ցեղի» վորդի-
ների բացարձակապես արգելված է ուսումը
բարձրագույն դպրոցներում:

Լեհաստանի ժողովրդական լուսավորության
մինիստրությունը չի թագցնում այն խաչատուակ
փաստը, վոր Լեհաստանում մեկ միլիոնի չափ
դպրոցական հասակի յերեխաները զրկված են
ուսումից: Լեհաստանի ազգային փոքրամասնու-
թյունները միանգամայն զրկված են մայրենի
լեզվով սովորելու հնարավորությունից:

Ուկրաինական դպրոցների թիվը Լեհաստանում
3 հազարից հասցված է 148—ի:

Անգլիայում, հանրակրթական դպրոցներում սո-
վորողների քանակը 1913|14 թ. 7—800 հազարից
1933|34 թիշավ 7.240 հազարի: Նույնպիսի պառ-

կեր ենք տեսնում նաև Ֆրանսիայում և այլ
լերկրներում:

Յեվ միայն ԽՍՀՄ—ում ենք տեսնում իս-
կական կուլտուրայի, գիտության, գիտելիքե-
րի ծաղկումը: Միայն մեր յերկրում յուրաքան-
չյուր քաղաքացու առջև, վոր սովորել է ցան-
կանում, լայն բացված են դպրոցների և ուսում-
նական հաստատությունների դռները:

Առաջին և յերկրորդ հնգամյակների տարի-
ներին ԽՍՀՄ—ում ստեղծված են մոտ 50.000
նոր դպրոցներ, թե նոր շինարարության հաշվին
և թե գլխավորապես գյուղում—դպրոցի կա-
րիքներին հարմարեցնելով կուլակների ու կալ-
վածատերերի տները: 1936թ. մեր քաղաքնե-
րում և բանվորական ավաններում ըստ պլանի
կառուցվելու ելին 1507 նոր բազմահարկ դպրոց-
ներ և կոլխոզային գյուղերում՝ 2082 նոր դպրոց:
Այդ պլանը հիմնականում իրացվեց: Մեր յերկրում
ազգաբնակչության այլ և այլ խավերի յերեխա-
ների կրթության հանդեպ վոչ մի արգելք գոյու-
թյուն չունի: Վոչ մի դպրոց մտնելիս գոյություն
չունեն ազգային սահմանափակման շրջանակներ:
Ուսումը ձրի չե բոլորի համար: Ավելին—սոցիալիս-
տական պետությունն որենքով պարտավորեց-
նում է ծնողներին՝ սովորեցնելու յերեխաներին
խորհրդային դպրոցներում: Ցարական Ռուսաս-

տանում ազգաբնակչության 3/4 մասն անգրագետ
եր: Մեր լերկրում ըստ ժողտնտեսաշխատան կենտ-
վարչության տվյալների գրագետների 0/0 — ը
1933 թ. հասնում էր 90-ի:

Դասավանդումը խորհրդային դպրոցում տար-
վում է յուրաքանչյուր ազգության մայրենի
լեզվով:

1935—36 ուսումնական տարում ԽՍՀՄ-ի բար-
ձրագույն դպրոցներում սովորում էին 525 հա-
զար ուսանող: Միայն վերջին 6 տարում 1930-
35 թ.թ. մեր բարձրագույն դպրոցներում պատ-
րաստվել են 280 հազարից ավելի լերիտասարդ
մասնագետներ: Տեխնիկումներում 1935-36 ուս.
տարում սովորում էին 711 հազար հոգի: Վեր-
ջին 5 տարում տեխնիկումները տվել են 520
հազարից ավելի լերիտասարդ մասնագետներ:

Այս թվերը կոմենտարիաների կարիք չեն զգում.
խորհրդային կինը ազատարդուն հավասար սովո-
րում է: Բավական է ասել, վոր 1935 թ. կանանց
թիվը բուհերում կազմում էր 38 տոկոս, իսկ
տեխնիկումներում 44 տոկոս:

Խորհրդային պետությունն իր վրա չէ վեր-
ցրել սովորողների նյութական ապահովման հոգ-
ւը: Խորհրդային ուսանողության ճնշող մեծա-
մասնությունը պետական թոշակ է ստանում:

Բուհերի, տեխնիկումների և բանֆակների ուսա-
նողներին պետությունը 1935 թ. 1778 միլիոն
ռուբլի թոշակ է հատկացրել: Բարձրագույն ու-
սումնական հիմնարկներում թոշակ են ստանում
460 հազար, իսկ տեխնիկումներում՝ 503 հազար
ռուսանոգ:

Ֆաբգործուհիներն իրենց գոյության ընթացքում
տվել են 1,5 միլիոն վորակյալ բանվորներ: Սո-
ցիալիստական պետության բոլոր այս միջոցա-
ռումները խոշոր չափով բարձրացրին բանվոր
լերիտասարդության կուլտուրական և կրթական
մակարդակը: Պատահականություն չէ, վոր Լենին-
գրքադի, Մոսկվայի, Նարկովի, Գորկու, Սվերդ-
լովսկի մեքենաշինարարական արդյունա-
բերության լերիտասարդ բանվորների 50% -ը
յոթնամյա կրթություն է ձեռք բերել:

Մեր լերկիրը, նրա քաղաքացիները և առաջին
հերթին լերիտասարդությունը, համառորեն սո-
վորում են: Վերցրեք որինակի համար ընկեր
ՍՏՍԼԻՆԻ անվան Մոսկվայի ավտո-գործարանը:
Այստեղ 18 հազար բանվորներ են սովորում ա-
ռանց արտադրությունից կտրվելու, այսինքն
այս հսկա ձեռնարկության մեջ աշխատող մարդ-
կանց 49% -ը: Միայն ոտար լեզուների ինստի-
տուտում այս գործարանի բանվորներին սովո-

ըում են 600 հոգի: Այդպիսի հազարավոր որինակներ կարելի չե բերել:

Կուսակցութիւնն ու կառավարութիւնը միջոց չեն խնայում խորհրդային քաղաքացիների կրթութիւն համար: Միայն 1936 թվին պրոլետարական պետութիւնը հատկացրել է 13 միլիարդ ուրբլի, իսկ առաջին և յերկրորդ հնգամյակի տարիներին ժողովրդական լուսավորութիւն վրա մեր յերկիրը ծախսել է 49 միլիարդ ուրբլի:

Սոցիալիզմի հաջրենիքն այսպես է ապահովում իր՝ Ստալինյան Սահմանադրութիւն 121-րդ հոդվածի կիրառումը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0225456

159

ԳԻՐԸ 40 ԿԴԳ.

44. 782

А. КОСАРЕВ

Право на образование
Гиз Арм. ССР, Ереван, 1938 г.